ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 12 >> << Մարտի >> 2019թ. N ՀՊ/369-2019

Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, բնակչության կենսագործունեության կազմակերպման մասին

Աղետի գոտու համայնքներում որոնողափրկարարական և վթարավերականգնողական, կործանիչ ալիքի հետևանքների վերացման աշխատանքների կազմակերպման, տարահանված բնակչության կենսաապահովման կազմակերպման նպատակով՝

որոշում եմ.

Առաջարկել՝

1. Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը՝

1.1. Աղետի գոտում կազմավորել երկու աշխատանքային խմբեր՝ Էջմիածին քաղաքում և Փարաքար համայնքում: Դրանցում ընդգրկել մարզային և տարածաշրջանային կոմունալ-կենցաղային, կոմունալ-էներգետիկ համակարգի կազմակերպությունների, բժշկական հիմնարկների, ոստիկանության բաժինների, շինարարական և ճանապարհաշինական կազմակերպություններին:

1.2. Ապահովել ներգրավվող մարմինների հետ համագործակցության իրականացումը՝ բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և կատարման համար:

1.3. Կազմակերպել հակահրդեհային անվտանգության ապահովումը:

2. Աղետի գոտու համայնքների ղեկավարներին՝

2.1. Իրականացնել միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով,

2.2. Կազմակերպել համայնքի տուժած բնակչությանը ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումը, անհրաժեշտության դեպքում իրականացնել տուժած բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, նյութական և մշակութային արժեքների տարահանում:

2.3. Կազմակերպել համայնքի ուժերի՝ մասնակցության ապահովումը փրկարարական աշխա-տանքներին:

2.4. Իրականացնել մահացածների հուղարկավորությունը:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

3. Արմավիրի ոստիկանության մարզային վարչությանը՝ իրականացնել.

3.1. Բնակչության տարահանման հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում, փրկարարական ուժերի և միջոցների շարժման երթուղիներում հասարակական կարգի պահպանության կազմակերպումն ու ապահովումը:

3.2.Պետական սեփականության, բնակչության ունեցվածքի պահպանության կազմակերպումը և իրականացումը:

3.3. Աղետի գոտում անցագրային ռեժիմի և պարետային ծառայության կազմակերպումն ու իրականացումը:

3.4. Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակություն ունեցող և կենսաապահովման կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը:

3.5. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը:

3.6. Աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված ուժերի և տարահանման անխա-փան երթևեկության ապահովումը:

3.7. Փրկարարական աշխատանքներին մասնակցության ապահովումը:

3.8. Աջակցություն մահացածների հաշվառմանը:

4. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝

4.1. Տուժած բնակչությանը և հիվանդներին ժամանակին անհրաժեշտ բժշկական օգնության ցուցաբերումը, նրանց տարահանումը բժշկական հաստատություններ և հետագա բուժման կազմակերպումը:

4.2. Երկրաշարժից տուժած տարածքներում սանիտարահամաճարակաբանական միջոցա-ռումների իրականացումը:

4.3. Բնակչության զանգվածային պատվաստման համար նախապատրաստական աշխա-տանքների իրականացումը:

4.4. Կազմավորումների և բուժհիմնարկների՝ անհրաժեշտ բժշկական գույքով և դեղորայքով ապահովումը:

4.5. Տարահանման բժշկական ապահովումը:

4.6. Մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման աշխա-տանքներին:

5. Մարզի կոմունալ- տեխնիկական ծառայությանը, կոմունալ- էներգետիկ համակարգի կազմակերպություններին՝

5.1. Տուժած տարածքների գազամատակարարման, էներգոմատակարարման վերականգ-նումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը:

5.2. Ջրային ռեսուրսների և համակարգերի պաշտպանական միջոցառումների իրականաց-ման ապահովումը:

5.3. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնակչության և կազմավորումների անձնակազմի՝ ջրով ապահովումը:

5.4. Մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մնում արձակման պահից:

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Invalid signature

X

VERIFIED OCSP 9/12/2019 13:54:09 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am